

**ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐ  
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ**

**§ 7. ԹՎԱՅԻՆ ՈՒՂԻՂ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ**

**2. Կետի կոորդինատներ հարթության վրա:  
Կոորդինատային հարթություն**

1. Կոորդինատային հարթության վրա պատկերված է  $ABCD$  ուղղանկյունը: Հայտնի են նրա  $A$ ,  $B$  և  $C$  գագաթների կոորդինատները.  $A(2; 1)$ ,  $B(2; 5)$ ,  $C(6; 5)$ : Գտնել  $D$  կետի կոորդինատները:
2. Հայտնի են  $ABCD$  քառակուսու երկու գագաթների կոորդինատները.  $A(-1; 3)$ ,  $B(-1; 7)$ : Գտնել  $C$  և  $D$  կետերի կոորդինատները: Դիտարկել հնարավոր երկու դեպքերը:
3. Տրված են՝  $A(0; -4)$ ,  $B(-3; 0)$  և  $C(-3; -4)$  կետերը: Կարելի է ասել, որ  $ABC$ -ն ուղղանկյուն եռանկյուն է:
4. Տրված են՝  $A(-2; 3)$ ,  $B(3; 3)$ ,  $C(3; -1)$  և  $D(-2; -1)$  կետերը: Կարելի է ասել, որ  $ABCD$ -ն. ա) քառակուսի է, բ) ուղղանկյուն է:
5. Ինչ պատկեր է  $A(0; 6)$ ,  $B(-3; 0)$ ,  $C(0; -6)$  և  $D(3; 0)$  գագաթներ ունեցող  $ABCD$  քառանկյունը (սչել քառանկյան տեսակը):
6. Կոորդինատային հարթության վրա պատկերեք  $ABCD$  քառակուսին այնպես, որ  $C$  գագաթն ունենա  $(-5; 5)$  կոորդինատներ, իսկ կոորդինատների սկզբնակետը դառնա  $AC$  անկյունագծի միջնակետը: Գտնել  $A$ ,  $B$  և  $D$  գագաթների կոորդինատները:
7. Գտնել  $ABCD$  զուգահեռագծի  $D$  գագաթի կոորդինատները, եթե հայտնի են.  $A(0; 2)$ ,  $B(3; 5)$ ,  $C(7; 5)$ :

8. Տրված են  $A(2; 4)$  և  $B(8; -4)$  կետերը: Հայտնի է, որ  $A$ -ն  $BN$  հատվածի միջնակետն է, իսկ  $M$ -ը՝  $AN$  հատվածի միջնակետը: Գտնել  $M$  կետի կոորդինատները:
9. Կոորդինատային հարթության  $A(x_1; y_1)$  և  $B(x_2; y_2)$  կետերի հեռավորությունը որոշվում է  $AB = \sqrt{(x_1 - x_2)^2 + (y_1 - y_2)^2}$  բանաձևով:  
 Օգտվելով այդ բանաձևից՝ գտնել  $A$  և  $B$  կետերի հեռավորությունը.
- ա)  $A(4; 3)$ ,  $B(0; 0)$ ,      բ)  $A(-6; 8)$ ,  $B(0; 0)$ ,  
 գ)  $A(3; 4)$ ,  $B(-3; -4)$ ,    դ)  $A(7; 0)$ ,  $B(-5; 5)$ :

### ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

1.  $D(6; 1)$ : 2.  $C(3; 7)$ ,  $D(3; 3)$  կամ  $C(-5; 7)$ ,  $D(-5; 3)$ : 3. Այո: 4. ա) Ո՛չ, բ) այո: 5. Շեղանկյուն (հավասար կողմերով զուգահեռագիծ): 6.  $A(5; -5)$ ,  $B(5; 5)$ ,  $D(-5; 5)$  կամ  $A(5; -5)$ ,  $B(-5; -5)$ ,  $D(5; 5)$ : 7.  $D(4; 2)$ : 8. ա) 5, բ) 10, գ) 10, դ) 13: